ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **<<18>> <<04>> 2019թ.**

Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Ա. Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների պատասխանատու

Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ

Վ.Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

Հ.Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ:

Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Ա.Շահինյան՝ ԱԻՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ.

Գ.Բոյաջյան՝ ԱԻՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Մարգարյան՝ ԱԻՆ շենքերի,շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ:

1. ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21 ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման մասին.

1.1. Ընթացակարգին մասնակցելու հրավերը ուղարկվել է էլեկտրանային գնումների կայքում՝ armeps.am և օրենքով սահմանված կարգով հրավերը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

1.2.Գնային առաջարկ պարունակող ծրարը բացվել է էլեկտրոնային եղանակով.

1.3 ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ծառայությունների նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գումարը/ՀՀ դրամ/
1.	*Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ(ԿԱՄԱԶ մակնիշի հրշեջ և փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգում)*	9 000 000
2.	*Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ*	11 000 000

1.4. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N N	Մասնակցի անվանումը	Հասցեն
1.	<ԿԱՄԱԶ Արմենիա> ՓԲԸ	ք. Երևան, Արտաշատի խճ. 2/4

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

2. Տվյալներ՝ ծրարը կազմելու, ներկայացնելու և սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

3. Տվյալներ՝ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 **ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցը ներկայացրել է մասնակցության դիմում, գնային առաջարկ և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

4. Մասնակցի առաջարկած գին(Ծառայությունների մատուցման միավորի գների հանրագումար)՝ ՀՀ դրամ **ներառյալ ԱԱՀ:**

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	<ԿԱՄԱՋ Արմենիա> ՓԲԸ
1	*Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ(ԿԱՄԱՋ մակնիշի հրշեջ և փրկարարական ավտոմեքենաների ընթացիկ նորոգում)*	7 034 891 038
2	*Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ*	-

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

5. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը **ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ **<ԿԱՄԱՋ Արմենիա> ՓԲԸ**-ին:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

6.Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված **mes.gnumner@yandex.ru** էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի **սույն ընթացակարգի շրջանակում գնման առարկայի համար հրավերով նախատեսված առավելագույն գնի** հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս

չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած **գնման առարկայի համար հրավերով նախատեսված առավելագույն գնի** քսան տոկոսից:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

7. Ղեկավարվելով «Գնումների մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով **ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21** ծածկագրով ընթացակարգի **2-րդ** չափաբաժինը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

8. **ՈԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/21** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

9.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ(ԳՊ/ԳԱՊ) ՝ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ (ԳՊ/ԲԱ) ՝

Վ. Դադոյան

Հ. Ծատուրյան

Հանձնաժողովի անդամներ (ԳՊ/ԳԱ) ՝

Ա.Շահինյան

Գ. Բոյաջյան

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀմ) ՝

Ա. Մարգարյան